

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐՆ Է 3,5 ՄԻԼԻՈՆ ԸՆՏՐՈՂՆԵՐՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԵՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 25 ԹԵԿՆԱԾՈՒՑ ՄԵԿԻՆ ԵՐԿԵՆՈՒ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ



Հոկտեմբերի 28-ին Վրաստանում կանցկացվեն նախագահական ընտրություններ: Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, առաջիկա ընտրություն-

ների համար մշակված ընտրացուցակներում ներգրավված է 3 միլիոն 518 հազար 877 ընտրող (այդ թվում 14 795-ը արտասահմանում): Ընտրողների թվից 38 հազարը գրանցված է Ախալքալաքի մունիցիպալիտետում, 20942-ը՝ Նինոծմիդայում, 34428-ը՝ Ախալցխեում, 20612-ը՝ Ծալկայում: Ընտրությունների օրը երկրում կգործի շուրջ 25 հազար

ընտրատեղամաս, որից 70-ը՝ Ախալքալաքի, 37-ը՝ Նինոծմիդայի, 35-ը՝ Ախալցխեի, 45-ը՝ Ծալկայի մունիցիպալիտետում: Բացի այդ, ընտրությունների համար աշխարհի 39 երկրներում կբացվեն ընտրատեղամասեր (Հայաստանում ընտրատեղամասը կբացվի Երեւանում, Հայաստանում Վրաստանի դեսպանությունում (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՍ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՆՔ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԵՍՏ



Կարելուր եւ պատասխանատու օր: Երկրում անց-

Հոկտեմբերի 25-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, կառավարության միստից առաջ հրավիրված մամուլի ասուլիսում, երկրի քաղաքացիներին կոչ արեց ակտիվորեն մասնակցել հոկտեմբերի 28-ին անցկացվելիք նախագահական ընտրություններին, քանի որ այդ օրը Վրաստանը նախագահական ընտրություններով կհամծնի եւս մեկ շատ կարելուր ժողովրդավարության թեստ:

- Մի կացվում են նախագահական ընտրություններ: Ցանկանում եմ մեր քաղաքացիներին կոչ անել՝ գնալ ընտրությունների եւ ցանկալի ընտրություն կատարել: Վրաստանն այս ընտրություններով կհամծնի եւս մեկ շատ կարելուր ժողովրդավարության (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ, ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՎՈՐՈՂ ՆԱԽԱԳԱՀ

Հոկտեմբերի 25-ին Թբիլիսիի Մարգապալատում տեղի ունեցավ հոկտեմբերի 28-ին անցկացվելիք նախագահական ընտրություններում գրանցված անկախ թեկնածու Սալոմե Ջուրաբիշվիլու համդիպումը վրաց հասարակության հետ:

Կառավարող «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության ընտրյալ թեկնածուի հետ համդիպմանը ներկա էին այդ կուսակցությունից երկրի գործադիր եւ օրենսդիր մարմիններում գործող ներկայացուցիչները, կուսակցական ընտրամիջին նախագահ Բիծինա Իվանիշվիլու գլխավորությամբ: Միջոցառմանը ներկա էին եւ ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Սալոմե Ջուրաբիշվիլու զավակները՝ Թեյմուրազ եւ Քեթևան Գորջեստանները, ուրիշներ:



Միջոցառմանը նախագահության թեկնածուին հանդես եկավ իր ծրագրային ելույթով, որտեղ մանրամասն ներկայացրեց նախագահի պաշտոնում նախագահի լիազորությունների խիստ սահմանափակ սահմանադրական շրջանակներում գործողության առաջնահերթությունները: (Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՆՆ

ՋՈՆ ԲՈՒԹՈՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ. ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՆ ԷԻՆ

Հոկտեմբերի 25-ին, Հարավկովկասյան շրջագայության շրջանակներում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Անվտանգության խորհրդի քարտուղար եւ Ազգային անվտանգության հարցերով նախագահ Դոնալդ Թրամփի խորհրդական Ջոն Բուլթոնը ժամանեց Թբիլիսի:

Այցի շրջանակներում, բարձրաստիճան ամերիկացին հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի, արտաքին գործե-

րի նախարար Դավիթ Ջալալիանու, պաշտոնատար այլ անձանց հետ: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՐ ԶԱՆԳԵԼ ՄԻՄՅԱՆՑ»

Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը գլոբալ առումով հայ-վրացական հարաբերություններում ամենակարեւոր խնդիրը համարում է երկկողմ հարաբերություններից դավադրությունների կանխավարկածը հանելու ու բացառելը: Նիկոլ Փաշինյանն այս մասին ասաց հոկտեմբերի 24-ին Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ՝ պատասխանելով պատգամավոր Տաճատ Վարդապետյանի հարցին:

- Եթե մեզ հաջողվի այդպիսի հարաբերություններ հաստատել, իսկ մեզ արդեն իսկ հաջողվում է մասն հարաբերություններ հաս-

տատել, մյուս հարցերի լուծումն ավելի հեշտ կլինի: Ես չեմ համարում (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ. ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁՈՎ ՎԱՐՉԱՊԵՏ ԶԸՆՏՐՎԵՑ

Ինչպես եւ նախատեսվում էր, Ազգային ժողովն առաջին փուլում Նիկոլ Փաշինյանին չընտրեց վարչապետի պաշտոնում: Հենց այս արդյունքն էր ակնկալում Փաշինյանի թեկնածությունն առաջադրած «Ելք» խմբակցությունը եւ, իհարկե, թավշյա հեղափոխության կողմնակիցները:

Հոկտեմբերի 24-ին Հայաստանի Ազգային ժողովը, սահմանադրությամբ սահմանված կարգի համաձայն, երկրի կառավարության հրաժարակցից (հոկտեմբերի 16) յոթ օր անց, ձեռնամուխ եղավ Հայաստանի վարչապետի ընտրությանը: Առաջադրվել էր միայն մեկ թեկնածու՝ Նիկոլ Փաշինյանը: Նրա օգտին չի քվեարկել ոչ մի պատգամավոր, դեմ էր մեկը, ձեռնպահ է մնացել 11-ը: Նիկոլ Փաշինյանին ընտրելու համար անհրաժեշտ էր 53 ձայն:

Հայաստանի սահմանադրության համաձայն, Ազգային ժողովի լուծարման համար անհրաժեշտ է, որպեսզի Ազգային ժողովում երկու ան-



գամ վարչապետ չընտրվի: Միայն այս պարագայում օրենսդրորեն թույլատրելի է դառնում Ազգային ժողովի լուծարումն ու դեկտեմբերի 9-ին խորհրդարանական արտահերթ ընտրությունների նշանակումը: Ուստի, ինչպես հոկտեմբերի 24-ին, այնպես էլ 7 օր անց, այսինքն՝ հոկտեմբերի 31-ին անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի վարչապետ չընտրվի:

ԵՐԵՎԱՆ - 2800

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ ՆՇԵՑ ԻՐ ԱՎԱՆԴԱԿԱՆ «ԵՐԵՎԱՆ-ԷՐԵՐՈՒՆԻ ՏՈՆԸ»

Հայ ժողովրդի հպարտությունը՝ Հռոմից էլ հին Երեւանը, այս տարի նշեց հիմնադրման 2800-ամյակը:

Ավանդույթի համաձայն, ամեն տարի երեւանցիները քույր քաղաքների եւ բարեկամ երկրների քաղաքների պատվիրակությունների հետ, մեծ շուքով տոնում են իրենց սիրելի քաղաքի օրը: Հյուրեր էին ժամանել 10 երկրի 15 պատվիրակություններ:

Այս տարի տոնական միջոցառումները մեկնարկեցին հոկտեմբերի 21-ին: Տոնական միջոցառումները մեկնարկեցին մարաթոնով՝ 2800 վագորդների մասնակցությամբ: Մեկնարկը ազդարարեց Երեւանի նորընտիր քաղաքապետ Հայկ Մարությանը: Երեւանի պատմության թանգարանում հոկտեմբերի 23-ին բաց-



վեց «Երեւան-2800» խորագրով միջազգային գիտաժողովը, որը կազմակերպվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի եւ Երեւանի պետական համալսարանի հետ: Հեծանվավազք, դասական, ջազ ու ռոք համերգներ, ազգային երգ ու պարի հարթակ: Անցկացվեց նաեւ Երեւանում բնակվող ազգային փոքրամասնությունների հարթակ: Իսկ տոնական երեկոն եզրափակվեց գալա համերգով ու հրավառությամբ:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ


ՋՈՆ ԲՈԼԹՈՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ. ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի վարչապետի և ԱՄՆ Անվտանգության խորհրդի քարտուղար Եյ Լեյթնի անվտանգության հարցերով նախագահ Դոնալդ Թրամփի խորհրդակցական հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստան-ԱՄՆ ռազմավարական համագործակցության խորացման հեռանկարները, Հյուսիս-ատլանտյան պայմանագրի Վրաստանի ինտեգրման գործընթացը: ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնյան վրացական կողմին շնորհակալություն հայտնեց միջազգային խաղաղարարական առաքելություններում երկրի ակտիվ մասնակցության համար: Ջոն Բոլթոնը կրկին անգամ ընդգծեց ամերիկյան կողմի անշեղ դիրքորոշումը Վրաստանի տարածքային ամբողջականության հարցում:



- Վրաստան-ԱՄՆ ռազմավարական գործընկերության բոլոր հիմնական ուղղությունների շուրջ հետաքրքիր և բովանդակալից զրույց ունեցանք: Անդրադարձանք արդիական թեմաներին և մարտահրավերներին: Անվտանգության առումով մարտահրավերներից ամենաառաջնայինը Վրաստանի բռնազավթած շրջաններում առկա իրավիճակն է: Այս ուղղությամբ, մեր ռազմավարական գործընկերոջ կողմից հ ա ս տ ա տ ու ն աջակցություն ունենք: Այս հարցը մշտապես ԱՄՆ-ի քաղաքականության օրակարգում է,- հանդիպման ավարտից հետո հայտարարեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն:



ԱՄՆ

ՉԵՂԱՐԿՎՈՒՄ Է ՄԻՋԻՆ ՈՒ ՓՈՔՐ ՀԵՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԹԻՈՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփի խոսքով, ԱՄՆ-ը լքում է միջին և պակաս հեռավարության հրթիռների ոչնչացման մասին գործող պայմանագիրը: Նրա խոսքով, Ռուսաստանը այդ պայմանագրի պայմաններն արդեն բավական ժամանակ չի կատարում:

- Մենք ստիպված կլինենք արտադրել այդ զենքը,- ասաց Թրամփը: Խոսքը վերաբերում է 1987 թվականին ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև կնքված պայմանագրին, որի համաձայն, կողմերը պայմանավորվել են ոչնչացնել 500-5500 կմ հեռավորության հրթիռներ: Պայմանագիրը ստորագրել են Ռոնալդ Ռեյգանը և Միխեյլ Գորբաչովը: Այս համաձայնագրի հիման վրա հնարավոր եղավ ոչնչացնել 2700 միավոր հրթիռ:

ԱՄՆ-ՈՒՍԱՍՏԱՆ ԿԿԱՅԱՆԱ ԲԱՐՁՐ ՄԱՎԱՐԱԿԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը հոկտեմբերի 23-ին հայտարարել է, որ Ույեմբերի 23-ին Փարիզում հավանաբար հանդիպում կանցկացնի ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

- Կարծում եմ, որ հավանաբար մենք կհանդիպենք,- ասել է նա՝ խոսելով Փարիզ իր պլանավորվող ուղեւորության մասին, որտեղ Ույեմբերի 11-ին մշտելու են Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի հարյուրամյակը:

- Հանդիպումը դեռեւս կազմակերպված չէ: Հավանաբար, դա կարվի,- հավելել է Թրամփը: Նախագահների հանդիպման մասին հոկտեմբերի 23-ին պատմել էր Պուտինի օգնական Յուրի Ուշակովը: Թրամփի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդակցական Ջոն Բոլթոնը դրա հնարավորությունը քննարկել է Պուտինի հետ կայացած զրույցի ընթացքում և հանդիպման համաձայնությունը հավաստել մամուլի ասուլիսում:

ՍԱՌԻՅԱՆ ԱՐԱԲԻԱ ԼՐԱԳՐՈՂԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՃԱՌ

ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն նախորդ շաբաթ հրատապ առաքելությանը մեկնեց Սաուդյան Արաբիա և Թուրքիա՝ պարզելու Washington Post թերթի թղթակից, արմատներով թուրք սաուդյնի լրագրող Ջամալ Խաշոկջիի անհետացումը: Լրագրողը, ով հայտնի էր Սաուդյան Արաբիայի իշխանությունների դեմ քննադատությամբ, հոկտեմբերի 2-ին անհետացել էր Ստամբուլում, թագավորության հյուպատոսություն մտնելուց հետո: Նշվել է, որ Խաշոկջին դաժանաբար սպանվել է Սաուդյան Արաբիայից ժամանած 15 հատուկ ծառայողների կողմից, որոնք, ըստ New York Times կայքի, կապված են սաուդյան գահաժառանգ արքայազն Սուլեյմանի բին Սալմանի հետ: Կասկածյալներից մեկը՝ Մաշալ Սաադ Ալ-Բոստանին, հայրենիք վերադառնալուց հետո, մահացել է Էր-Ռիադում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով: Հոկտեմբերի 19-ին Սաուդյան Արաբիան պաշտոնապես ընդունեց, որ լրագրողը մահացել է հյուպատոսությունում տեղի ունեցած քաշքշուկի պատճառով, սակայն, ըստ սաուդյնի բարձրաստիճան պաշտոնյայի, Խաշոկջիին պարզապես խեղդել են:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐՆ Է

ԱՅՍ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՆՔ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՍ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան թեստ, և հավատում են, որ բոլորս միասին, յուրաքանչյուր քաղաքացի այս թեստը կհանձնի այնպես, ինչպես հարկի է մեր երկրին,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն ու հավելեց, որ կառավարությունն արել է ամեն բան, որ-

պեսզի այս ընտրություններն անցկացվեն ազատ, թափանցիկ և ժողովրդավարական միջավայրում: - Սակայն ցանկանում են հավելել, որ հանրության պահանջն ու ցանկությունը՝ ունենալ իսկական եվրոպական տիպի նախընտրական քարոզարշավ, չիրականացավ մինչև վերջ քաղաքական որոշ

ուժերի ապակառուցողական հռետորաբանության պատճառով: Մենք թույլ չենք տա, որ ընտրական գործընթացում քաղաքական որեւէ ուժ մտցնի դիսոնանս: Խոստանում ենք, որ յուրաքանչյուր ընտրող հնարավորություն կունենա կատարել ազատ ընտրություն,- հայտարարել է Մամուկա Բախտաձեն:

3,5 ՄԻԼԻՈՆ ԸՆՏՐՈՂՆԵՐՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԵՆ 25 ԹԵԿՆԱԾՈՒՑ ՄԵԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյունում): Ընտրությունների համար քվեաթերթիկների տպագրումն սկսվել էր հոկտեմբերի 21-ին, ընդհանուր առմամբ, տպվել է 3 259 900 քվեաթերթիկ երկրի 6 տպարաններում, որտեղ աշխա-

տանքներին հետևում են տեղական և միջազգային դիտորդներ: Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների համար տպվել են երկլեզու և եռլեզու քվեաթերթիկներ: Այսպիսով՝ հայերենով և վրացերենով քվեաթերթիկները տարվելու են 133, իսկ վրացերենով և արբերջաներենով՝ 209 ընտրատեղամաս, եւս 4-ի համար տպվելու են եռլեզու քվեաթերթիկներ:

Նախագահական ընտրություններին հետևելու համար, գրանցվել են միջազգային 57 և 62 տեղական կազմակերպություններ:



საქართველოს ოკუპაციური ხელისუფლების წინააღმდეგ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՄՈՂԵԼԸ

Ինչպիսին է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ վրացական մոդելը, և ինչ է ենթադրում բաց կառավարման ճանապարհով պաշտոնյաների հանցանքի դեմ պայքարը՝ այս հարցերի շուրջ է գրուցել արդարադատության նախարարը միջազգային հակակոռուպցիոն կոնֆերանսին:



Թեա Ծուլուկիանին, ով մինչև նույն ժամանակ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային հակակոռուպցիոն կոնֆերանսի աշխատանքին: Նախարարը խոսքով էլ ունեցել «Կոռուպցիայի դեմ պայքարը՝ բաց կառավարման միջոցով» թեմայով: Հարթակը կազմակերպված էր Վրաստանի արդարադատության նախարարության և «Բաց կառավարման գործընկերության» կողմից:

վածության, կառավարության թափանցիկության մասին և քննարկել այն մեխանիզմները, որոնցով Վրաստանը վարում է բաց կառավարման գործընթացը:

Արդարադատության նախարարը նշել է, որ Վրաստանի կառավարության տարբեր ծյուղեր, կենտրոնական և տեղի կառավարություններ, գործադիր, օրենսդիր ու դատական իշխանությունը լիարժեք ներգրավված են բաց կառավարման գործընթացին:

- «Բաց կառավարում Վրաստան»-ի 4-րդ՝ 2018-2019 թվականների գործողությունների պլանում ներգրավված կլինի 11 մոնիցիցիալիստետ, որը շատ կարելու է,- նշել է արդարադատության նախարարը:

Թեա Ծուլուկիանին միջոցառման մասնակիցներին ծանոթացրել է հանրային կենտրոնների հայեցակարգին և դրանց աշխատանքի յուրահատկություններին:

գերատեսչական համակարգման խորհրդի նախագահին է, մասնակցել է Կոպենհագենում անցկացված բարձր մակարդակի միջազգային հակակոռուպցիոն կոնֆերանսի աշխատանքին: Նախարարը խոսքով էլ ունեցել «Կոռուպցիայի դեմ պայքարը՝ բաց կառավարման միջոցով» թեմայով: Հարթակը կազմակերպված էր Վրաստանի արդարադատության նախարարության և «Բաց կառավարման գործընկերության» կողմից: Վրաստանի արդարադատության նախարարը որոշում կայացնելու գործընթացում խոսել է քաղաքացիների ներգրավ-

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՐ ԶԱՆԳԵԼ ՄԻՄՅԱՆՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծակվում պնդել, որ մեր հարաբերություններում ընդհանրապես խնդիրներ չեն կինի, բոլոր հարաբերություններում խնդիրներ կլինեն, քանի որ խնդիրների բացակայությունը նշանակում է հարաբերությունների բացակայություն, բայց շատ կարելու է մթնոլորտը: Ես ուրախ եմ, որ վերջին ամիսներին կարողացել ենք բաց

ու անկեղծ մթնոլորտ հաստատել հայ-վրացական հարաբերություններում: Մենք Վրաստանի վարչապետի հետ ոչ ֆորմալ ուղիղ կապի մեջ ենք, ցանկացած պահ կարող ենք զանգել միմյանց, խնդիրներ առաջ քաշել, որպիսություն հարցնել, և դա շատ դրական է,- ասաց վարչապետի պաշտոնակատարը:

Նիկոլ Փաշինյանն ուրախությամբ ընդգծեց, որ Վրաստանի վարչապետ Մամուկա

կա Բախտաձեի հետ հանդիպման ժամանակ արձանագրել են, որ բոլոր պայմանավորվածություններն ուժի մեջ են:

- Ես հույս ունեմ, որ առաջիկայում միջկառավարական համագործակցության հանձնաժողովի նիստ կանենք և նոր թափ կհաղորդենք մեր քաղաքական, տնտեսական հարաբերություններին ու մարդկային կապերին,- եզրափակեց Փաշինյանը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԼԻԱ ԳԻԳԱՈՒՐԻՆ՝ ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՒՆԱԽԱՐԱՐ



Հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով պետնախարարի տեղակալի պաշտոնը կզբաղեցնի Լիա Գիգաուրին:

Ինչպես հայտնում են նախարարությունից, նա կզբաղվի քաղաքացիական հավասարության հարցերով: Լիա Գիգաուրին 2013-2018 թվականներին զբաղեցրել է Վրաստանի կրթության, գիտության նախարարի տեղակալի պաշտոնը: Մինչ այդ, նա եղել է կրթության եւ գիտության նախարարության հիմնական կրթության կառավարման ու զարգացման վարչության բաժնի պետը: Նա ունի երկար տարիների մանկավարժի, կառավարչի եւ այլ ղեկավար պաշտոններում աշխատելու փորձ: Լիա Գիգաուրին ավարտել է Իվանե Ջավախիշվիլու անվան թբիլիսիի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: Սովորել է նաեւ Ի.Գոգեբաշվիլու անվան Պետական մանկավարժական համալսարանի ֆիզմաթի ֆակուլտետում: Ասպիրանտուրան ավարտել է Վրաստանի մանկավարժական գիտությունների ազգային ինստիտուտը: Բիզնեսի կառավարման դոկտոր է:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԻՎԱՆԵ ՄԱՃԱՎԱՐԻԱՆԻ. «ՎԱՐԿԵՐ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՎՃԱՐՈՒՆԱԿ ԵՆ»

Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին, կառավարության նիստից հետո լրագրողների հետ հանդիպմանը, անդրադառնալով նոյեմբերի 1-ից գործարկվող բանկային նոր կարգավորումների հարցին, հայտարարեց, որ բանկային վարկ կստանան բոլորը, ովքեր ունեն այն վճարելու հնարավորություն:

կարգավորումների բացասական ազդեցությունը կանխատեսվել է միայն 0,6 տոկոսի վրա, այն էլ՝ բավականին կարճ ժամկետով եւ ոչ թե 3 տոկոսի, ինչպես հայտարարում են ընդդիմախոսները: Նախարարի խոսքով, ցանկացած տնտեսական ճգնաժամի հիմքը առատ պարտքերն են: Իվանե Մաճավարիանու գնահատմամբ, բանկային համակարգը ամենահզոր ֆինանսական սեկտորն է, որի կյունությանը վտանգ չի սպառնում:



ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՐԶ 15 ՀԱԶԱՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻ ՄՏԱՅԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ



2016 թվականի սեպտեմբերի 16-ից մինչեւ 2018 թվականի օգոստոսի 17-ը Վրաստանի քաղաքացիություն է շնորհվել 15 229 օտարերկրացու: Ինչպես պարզվեց, ամենաշատը Վրաստանի քաղաքացիություն են ստացել Ռուսաստանի քաղաքացիները՝ 6447, 298-ը՝ Թուրքիայից են, 194-ը՝ Իրանից:

Վերոնշյալ անձինք արդեն իրավունք ունեն մասնակցել Վրաստանում անցնող բոլոր ընտրություններին: Ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն նաեւ երկքաղաքացիության կարգավիճակով անձինք, իսկ երկքաղաքացիություն ստանալու համար, Վրաստանի արդարադատության նախարարությանը վերջին երկու տարիների ընթացքում դիմել է 58 143 օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անձ: Այդ կարգավիճակ ունեցողների մեծամասնությունը՝ 41 631-ը, Ռուսաստանի քաղաքացիներ են, 2336-ը՝ Թուրքիայի, իսկ 525-ը՝ Իրանի: Ինչպես տեղեկացրեց Վրաստանի արդարադատության նախարարությունը, ներկա դրությամբ, Վրաստանում երկքաղաքացիություն ունի 58 143 մարդ:

ԲԵՐՔԱՀԱՎԱՔ


ԱՌԱՅԻՆ ԶՅՈՒՆԸ ԶՎԱՍԽԵԹՈՒՄ. ԼԱՎ Է, ՈՐ ԿԱՐՏՈՑԻԼԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԵՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Հոկտեմբերի 26-ին առաջին ծյունը տեղաց Ախալքալաքի եւ Նինոծմինդալի մունիցիպալիտետներում: Բարեբախտաբար, մունիցիպալիտետներում կարտոֆիլի բերքահավաքը արդեն ավարտվել էր, եւ վաղ ծյունը այդ առումով հիմնականորեն չստեղծեց:

- Այս տարի Ախալքալաքի մունիցիպալիտետում, նախորդ տարիների համեմատ, ավելի վաղ սկսված բերքահավաքից եւ բերքից բնակիչները զոհ են, հաղորդում է Jnews-ի թղթակից Գայանե Ակոջյանը: - Այս տարի եղանակային պայմանները բարենպաստ էին, մեզ հետ զրույցում ասաց Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության եւ գյուղատնտեսության նախարարության Ախալքալաքի տեղեկա-

կա-խորհրդատվական կենտրոնի ղեկավարներից մեկը՝ Ռամազ Գոգուլաձեն եւ հավելեց, որ այսօր արդեն համարյա բոլոր գյուղերում մեծ բեռնատարողության մեքենաներ են կանգնած եւ կարտոֆիլ են գնում ֆերմերներից: Ռ.Գոգուլաձեն հաստատեց նաեւ, որ այս տարի շատ է տարածվել սնկային հիվանդությունը: - Ցավոք, մեզ նա, մենք շրջեցինք գյուղերով եւ դաշտերում տեսանք մնացած

«վարակված» կարտոֆիլը: Այդ հիվանդությունը սնկային է, որը միանգամից տարածվում է քամու, տեխնիկայի եւ այլ միջոցներով: Եթե քիմիկատներով չդիմակայենք հիվանդության դեմ, ապա այն կմնա հողի մեջ: Նա կարտոֆիլագործներին խորհուրդ տվեց այսօրվա բերքը դաշտում չթողնեն, հավաքեն ու մաքրեն, քանի որ հիվանդությունն ավելի է տարածվում, եւ հաջորդ տարի վտանգն ավելի կմեծանա: Այսօրվա դրությամբ, վերջնական հաշվարկներ արված չեն, սակայն միջին բերքատվությունը մունիցիպալիտետներում կազմում է մոտ 18-20 տոննա, ինչը, անցած տարիների համեմատ, 5 տոննայով ավելացել է:



ՀԱՄԱՆԵՐՈՒՄ 57 ԿԱԼԱՆԱՎՈՐԻ

Հոկտեմբերի 25-ին Վրաստանի նախագահը ստորագրեց «Տարբեր պատժաժամկետով կալանավորների համաներման մասին» հրամանը, որի համաձայն, համաներման է ստացել 57 կալանավոր:

Համաներման հանձնաժողովի նախագահ Ջվիադ Քորիձեի հայտարարությամբ, համաներման ակտի հիման վրա կալանավայրից ազատ է արձակվել 300 բանտարկյալ:

Կրճատվել է ժամկետով եւ ցմահ ազատազրկված 27 անձի պատիժ, այդ թվում՝ երկու կնոջ:

Ջվիադ Քորիձեի տեղեկությամբ, Համաներման հանձնաժողովը հոկտեմբերի 22-24-ը քննարկել է 575 կալանավորի գործ: Նախագահի հրամանն արդեն ուղարկվել է Վրաստանի արդարադատության նախարարության հատուկ պատժակատարողական հաստատությանը:

ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՄԹԵՐՔԻ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Վրաստանի կառավարությունը մթերքի անվտանգության հետ կապված կարգի սահմանումը, 2018 թվականի նոյեմբերի 5-ի փոխարեն, հնարավորություն կունենա սահմանել մինչեւ 2019 թվականի հունվարի 1-ը:

Համապատասխան փոփոխությունները մտցվում են «մթերքի անվտանգության եւ ազատ շրջանառության օրենսգրքում»: Մինչ այդ, նշված կարգի սահմանման համար, ժամկետ էր տրվել մինչեւ նոյեմբերի 5-ը:

ԳՐԻՊԻ ԴԵՄ ԴԱՏՎԱՍՏԱՆ ԿՈՉ

Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգենկոն բնակչությանը կոչ է անում անցնել գրիպի դեմ պատվաստում: Նախարարի հայտարարությամբ, դրա համար հոկտեմբերը ամենալավ ժամանակաշրջանն է:

Վակցինան անվճար է տարեցների, հղիների, նաեւ մինչեւ 18 տարեկան շաքարախտով տառապողների, բժշկական հաստատություններում աշխատող անձնակազմի համար: Ինչպես նաեւ դիալիզի վրա գտնվող անձանց, հեպատիտ «Ց»-ի եւ ՄԻՎՎ-ով վարակված անձանց համար: Ինչ վերաբերում է այն անձանց, ովքեր ռիսկային խմբերում ներառված չեն, նախարարի խոսքով, նրանց համար կհայտարարվի մեկ օր, երբ պատվաստումը անվճար կլինի:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը հիշեցնում է, որ ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ից սպառվում է ֆիզիկական անձանց կողմից գույքահարկի տարեկան հայտագրի ներկայացման ժամկետը:
Այդ ժամկետից հետո ներկայացրած հայտագիրը կհամարվի ուշացած: Նկատի ունեցեք, որ հայտագրի ուշացումով ներկայացումը հարկային օրենսդրությամբ նախատեսվում է համապատասխան պատասխանատվություն (պատժամիջոց):
Հիշեցնենք, որ գույքահարկի տարեկան հայտագրի ներկայացումը պարտադիր է ֆիզիկական անձանց, այդ թվում՝ ձեռներեց ֆիզիկական անձանց, եթե նա հանդիսանում է Վրաստանի տարածքում հարկադրված գույքի սեփականատեր եւ, միաժամանակ, ընտանիքի նախորդ տարվա եկամուտը գերազանցել է 40 հազար լարին: Նաեւ անկախ եկամուտների ծավալից, եթե ֆիզիկական անձը Վրաստանի տարածքում ունի գյուղատնտեսական կամ ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածք, որը ազատված չէ գույքահարկի վճարման պարտականությունից:
Ինչ վերաբերում է գույքահարկի ամենամյա պարտադիր հայտագրի ներկայացմանը, ապա այն հարկային մարմնին պետք է ներկայացվի մինչեւ օրացուցային տարվա նոյեմբերի 1-ը: Հարկադրված գույքի մասին տվյալները հայտագրում գրանցվում են՝ ելնելով կարկային տարվա տվյալներից, իսկ հարկադրված հողատարածքի վերաբերյալ տվյալները՝ ընթացիկ հարկային տարվա ապրիլի 1-ի դրությամբ համապատասխան տվյալներով:
Հայտագրի ներկայացումն իրականացվում է էլեկտրոնային կարգով իրականացվում է եկամուտների ծառայության կայք-էջից www.rs.ge լինելի միջոցով https://eservices.rs.ge/Login.aspx: Եթե մոռացել ենք եկամուտների ծառայության կայք-էջից www.rs.ge սպառողի ծածկագիրը, ապա կարող եք օգտվել ծածկագրի վերականգնման ծառայությունից: Լրացուցիչ հարցերի դեպքում, կարող եք կապվել 2-299-299 հեռախոսահամարով:
ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ը ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԸ Է



ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Վաղը՝ հոկտեմբերի 28-ին, Վրաստանի քաղաքացիներին իրավունք է վերապահվում վերջին անգամ ընտրել երկրի նախագահ: Վերջին անգամ, քանի որ նոր նախագահի ընտրությունից հետո, համաձայն իրականացված սահմանադրական փոփոխությունների, նախագահի ընտրության իրավունքը լրիվությամբ վերապահվում է Վրաստանի խորհրդարանին:

Հոկտեմբերի 28-ին անցկացվելիք նախագահական ընտրությունների մյուս նշանակալի առանձնահատկությունն այն է, որ 2018 թվականի այդ պաշտոնի հավակնորդների թիվը անմախքորեն է՝ 25, որից 19-ը ներկայացվել է քաղաքական կուսակցությունների, իսկ 6-ը նախաձեռնող խմբերի կողմից: Յուրահատկությունների թվին կարելի է դասել նաև այն, որ կառավարող «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը իրաժարվեց առաջադրել իր թեկնածուին և գերադասեց իր աջակցությունը հայտնել ոչ կուսակցական անկախ թեկնածու՝ Սալոմե Ջուրաբիշվիլուն:

Եվս մի հանգամանք, որ հնարավոր չէ անտեսել: Խոսքը վերաբերում է նախագահության թեկնածուներից շատերի (մեծամասնության) մոտ հստակ ծրագրի բացակայությունը, եւ, ընտրվելու դեպքում, այս կամ այն հարցով նրանց գործունեության մասին կարելի է միայն կռահումներ անել՝ ելնելով նրանց նախընտրական ելույթներից:

Հստակ, համոզիչ ծրագիր էր ներկայացրել Սալոմե Ջուրաբիշվիլին: Քիչ թե շատ ներկայանալի ծրագիր ունեին նաև Դավիթ Բաքրաձեն, Գրիգոր Վաչաձեն, Դավիթ Ուսուխաշվիլին:

Այսպիսով, հոկտեմբերի 28-ին քվեաթերթիկների մեջ ներկայացված են հետևյալ թեկնածուները, ովքեր հավակնում են Վրաստանի նախագահի պաշտոնին, ըստ հեթանոսական իրենց համարների.

- 1. Միխեիլ Անթոնի** - «Պետությունը ժողովրդի համար» շարժում:
- 2. Դավիթ Բաքրաձե** - «Եվրոպական Վրաստան-Շարժում ազատության համար» քաղաքական միավորում:
- 4. Վախթանգ Գաբրունիա** - «Քրիստոնեա-ժողովրդավարական շարժում» քաղաքական միավորում:
- 5. Գրիգոր Վաչաձե** - «Միասնական ազգային շարժում»:
- 10. Շավաթա Նաթելաշվիլի** - «Վրաստանի Լեյբորիստական կուսակցություն»:
- 13. Զվիադ Սեխախաշվիլի** - «Վրաստանի Բրիտանացի-պահպանողական կուսակցություն» քաղաքական միավորում:
- 17. Գիորգի Լիլուաշվիլի** - «Վրաստան» քաղաքական միավորում:
- 18. Ալեկսի Ասաթյանի** - «Վրաց ավանդապահների միություն»:
- 21. Կախա Կուկալա** - «Ազատ Վրաստան» քաղաքական միավորում:
- 22. Օթար Մեուճարգիա** - «Արդյունաբերությունը կիրկի Վրաստանը»:
- 23. Իրակլի Գորգաձե** - «Շարժում Վրաստանի ազատության համար» քաղաքական միավորում:
- 25. Դավիթ Ուսուխաշվիլի** - «Ազատ ժողովրդավարներ» քաղաքական միավորում:
- 27. Զվիադ Բարդաձե** - «Քաղաքացիական հարթակ-Նոր Վրաստան» քաղաքական միավորում:
- 28. Միխեիլ (Գեյա) Սալուաշվիլի** - «Արդարության վերականգնման միություն-ժողովրդի ձայն. Աստված ճշմարիտ» քաղաքական միավորում:
- 30. Զվիադ Իաշվիլի** - «Ազգային ժողովրդավարական կուսակցություն»:
- 31. Թամար Ցխրազաուլի** - «Ազատություն-Զվիադ Գամսախուրդիայի ուղի» քաղաքական միավորում:
- 35. Գեյա Խուցիշվիլի** - «Վրաստանի ուժային վետերանների և հայրենասերների քաղաքական շարժում» քաղաքական միավորում:
- 36. Զուրաբ Զավարիձե** - «Գիրչի»:
- 40. Լեան Զխեիձե** - «Նոր քրիստոնեա-ժողովրդավարներ» քաղաքական միավորում:
- 48. Սալոմե Ջուրաբիշվիլի** - Ընտրողների նախաձեռնող խումբ:
- 49. Բեսարիոն Թեղաշվիլի** - Ընտրողների նախաձեռնող խումբ:
- 51. Գիորգի Անդրիաձե** - «Ընտրողների նախաձեռնող խումբ»:
- 58. Կախաբեր Գիճիանձե** - Ընտրողների նախաձեռնող խումբ:
- 62. Վլադիմիր Նոնիակաշվիլի** - Ընտրողների նախաձեռնող խումբ:
- 65. Թեյմուրազ Շաշիաշվիլի** - Ընտրողների նախաձեռնող խումբ:

ՍԱԼՈՄԵ ՋՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐԸ, ՈՒՄ ՀԵՏ ԻՆՁ ԲԱՆՏ Է ՎԻՃԱԿՎԵԼ ՀԱՆԴԻՊԵԼ, ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԲԱՑՈՒԿ ՍԱՐԴԻԿ ԵՆ»



Հոկտեմբերի 22-ին, Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցի մեծ սրահում, տեղի ունեցավ նախագահության թեկնածու Սալոմե Ջուրաբիշվիլու հանդիպումը Թբիլիսիում բնակվող հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը, որը բացեց Վրաստանի խորհրդարանի անդամ Ռուսլան Պողոսյանը, Սալոմե Ջուրաբիշվիլին ասաց. - Առաջին հերթին, ես զգում եմ մեծ պատասխանատվություն՝ որպես ապագա նախագահ: Սա մեր պատասխանատվությունն է և ոչ թե այն մարդկանց, ովքեր հոծաբնակ ապրում են գյուղերում ու քաղաքներում և չեն ստանում պետական լեզվով համապատասխան կրթություն, ինչը նրանց թույլ կտար լրիվությամբ ինտեգրվել պետության, մասնավոր հատվածների կառույցներում, լրիվությամբ օգտվել երկրում գործող բոլոր ծրագրերից: Դուք պետք է ինտեգրված լինեք բոլոր պետական ծրագրերում, պետք է օգտվեք բոլոր ծրագրերից, օրինակ՝ ուղարկե՛ք ձեզ արտասահման սովորելու: Ես պատրաստ եմ ապագայում աշխատել այս խմբերի հետ, որպեսզի տեսնենք, թե ինչպես կարող է նախագահը ել իր վարչակազմը աջակցել այս հիմնախնդիրների կարգավորմանը:

Մինչ այդ, Թբիլիսիում հրապարակված հատուկ հանդեսի հայկական տարբերակի ընթերցողներին դիմելով Սալոմե Ջուրաբիշվիլին, ընդգծեց.

«Հավանաբար, իմ բախտը որոշ չափով բերել է, քանի որ իմ ողջ գիտակցական կյանքում բոլոր այն ազգությամբ հայերը, ում հետ ինձ բախտ է վիճակվել հանդիպել, արտակարգ եւ բացառիկ մարդիկ էին: Փարիզում նրանք Շառլ Ազնավուրն ու Միշել Լեգրանն էին, մեր ընտանեկան բժիշկ Ռուբեն Ավագյանը, Նյու-Յորքի ՄԱԿ-ի գրասենյակում աշխատելու ժամանակների իմ գործընկեր եւ բարեկամ, ներկայումս ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Մեսրոպ Աբելյանը, մյուսները, նրանք անցնելի տպավորություն եւ հետք են թողել իմ ու իմ ընտանիքի անդամների վրա:»

Ըստ իս, դա պատահական չէ: Պատահական չէ նաև այն, որ այսօր Վրաստանում, մեր ընդհանուր հայրենիքում ապրում, աշխատում եւ ստեղծագործում են հազարավոր հայեր: Եվ մեր ժողովուրդների բարեկամությունը, իր սկիզբն առնելով առասպելական Հայուսից ու Քարթլոսից, յուրատեսակ էստաֆետայով անցելով գոյության եւ ինքնության պահպանման համար մեր համատեղ պայքարի միջով, մեր երկու ժողովուրդների մեծերի՝ Սայաթ-Նովայի, Թումանյանի ու Գրիշաշվիլու, Իսահակյանի եւ Տաթևի, Խաչատրյանի ու Փալիաշվիլու, Համբարձումյանի եւ Խարաձեի ու շատուշատ ուրիշների հոգով, հասել է մեզ: Եվ այսօր, նախագահական ընտրությունների շեմին՝ որպես այդ պաշտոնի թեկնածու, ցանկանում եմ վստահեցնել ձեզանից յուրաքանչյուրին, որ կլինեմ բոլորի նախագահը, անկախ ազգային, կրոնական, սեռական պատկանելության, բոլորից՝ անխորհրդ:

Ասե՛ք նաև, որ մինչ այս հանդիպումը Թբիլիսիում, Սալոմե Ջուրաբիշվիլին հանդիպել էր հայ համայնքի ներկայացուցիչների հետ Ախալքալաքիում, Նինոծմիդղայում, Ախալցխիում, Ծալկայում, Մառնեուլիում, Բուլնիսիում, Թեթրի Ծղարայում:

ԳՐԻԳՈՐ ՎԱՇԱՋԵ. «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՈՑԱՐՔԱԿ ԵՐԿՐԱՍԱՆԵՐՈՒՄ ՊԵՏՔ Է ՈՒԾԵՂԱՑՎԻ ՎՐԱՏ ԼԵՁՎԻ ՈՒՄՈՒՑՈՒՄԸ»

Միավորված ընդդիմության աջակցությունը վայելող «Միացյալ ազգային շարժում» կուսակցության թեկնածու Գրիգոր Վաչաձեն վստահեցնում է, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ մեծ աշխատանք է տանելու:



- Վրաստանը բազմազգ է բազմակրոն երկիր է, ինչով մենք հպարտանում ենք: Վրաստանի բոլոր քաղաքացիները, անկախ իրենց կրոնական կամ էթնիկ

պատկանելությունից, հավասար են: Ցավոք, նրանց հանդեպ անհավասարության, խտրականության դեպքերը վերջին շրջանում ավելացել են:

Վաչաձեն կարծում է, որ, նախեստաց, էթնիկ փոքրամասնություններով բնակեցված շրջաններում պետք է ուժեղացնել վրաց լեզվի ուսուցումը՝ արագացնելով նրանց ինտեգրման գործընթացը:

- Անպայման պետք է ուժեղանա «1+4» ծրագիրը, որը վերջին ժամանակների ամենահաջողված նախագծերից մեկն է դարձել: Այս նախագիծը հազարավոր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ բարձրագույն ուսում ստանալու հնարավորություն է տվել, նշում է նա:

ՊՎԻԹ ԲԱՔՐԱՉԵ. «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԿՐՈՒՄԸ ԲԻՆՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԻՑ»

«Եվրոպական Վրաստան» կուսակցության նախագահի թեկնածու Դավիթ Բաքրաձեն ազգային փոքրամասնությունների հետ հանդիպմանը խոստացավ, որ նախագահ ընտրվելու դեպքում նախագահական հիմնադրամից կֆինանսավորի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին արտասահմանում կրթություն ստանալու համար:



Բացի այդ, ազգային փոքրամասնության ներկայացուցիչները հնարավորություն կունենան աշխատել նաև նախագահի աշխատակազմում:

Ըստ Դավիթ Բաքրաձեի, էթնիկ փոքրամասնությունների անրապնդումը պետության շահերից է բխում:

ՊՎԻԹ ՌԻՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՄՇԱԿԻ 10-ԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ»



«Կառուցման շարժում» կուսակցությունից առաջադրված է «Ազգային ֆորում» ու «Ազատ ժողովրդավարներ» կուսակցությունների աջակցությանն արժանացած թեկնածու Դավիթ Ուսուխաշվիլին, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հանդիպմանը, մասնավորապես, հայտարարեց.

- Ինձ համար գլխավոր արժեքը մարդն է, նրա ազատությունն ու իրավունքը: Պետության կողմից ավելի շատ ուշադրության կարիք ունեն այն խմբերը, որոնք սեփական իրավունքներն իրականացնելու համար լրացուցիչ խոչընդոտներ հաղթահարելու կարիք ունեն: Ազգային, կրոնական եւ մյուս փոքրամասնությունները հենց այսպիսի, գրեթե անխուսափելի խոչընդոտների են հանդիպում, որի պատճառով պետք է նրանց մասին հոգ տանել: Ինչ վերաբերում է նրանց ներգրավվածությանը պետական-քաղաքական կյանքին, սա ո'չ ավելի, ո'չ պակաս, մեր պետականության ամենանախաձեռնելի հատվածն է: Նախագահի մակարդակով, 10-ամյա ծրագիր պետք է մշակվի, որը կապահովի ազգային եւ կրոնական փոքրամասնությունների մասնակցությունը երկրի կառավարման գործընթացին:

ՇԱԿԱ ՆԱԹԵԼԱՇՎԻԼԻ. «ԲՈԼՈՐ ՀԱՎԱՍԱՐ ԵՆ ՕՐԵՆՔԻ ԱՈՒՅ»

Լեյբորիստական կուսակցության եւ, ընդհանրապես, նախագահական ընտրությունների ամենաստատավոր թեկնածու Շավաթա Նաթելաշվիլին եւս անդրադառնում է ազգային փոքրամասնություններին:



- Բոլոր կրոնական, ազգային եւ սեռական փոքրամասնությունները հավասար են օրենքի առջև: Նրանց իրավունքները մեծամասնության հետ միասին պետք է պաշտպանված լինեն: Թեպետ, ինչպես նշեց ինքը՝ Շավաթա Նաթելաշվիլին, ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանները դուրս էր բերել իր նախընտրական քարոզարշավի աշխարհագրությունից: - Այնտեղ գնալն իմաստ չունի, քանի որ, միևնույն է, այդ երկրամասերում քվեարկելու են կառավարող թիմի թեկնածուի օգտին, - ընդգծեց նա: